ձ.

Ցայսմիկ ամի ի գաղատիայ չոլք եկեղեցիք ուղղափառաց զԾնունդ տեառն հռչակեցին հանդիսապէս ի դեկ. 25։ (Հ. Պօղոս վ. առ Մխիթար, 1742 ի մարտի 20, [կ. Պոլիս?])։

ձա.

Ցայսմիկ միջոցի հողմով պատերազմաց ամբոխեցելոց՝ երկիւղ գոյ ոչ միայն ի զօրաց թշնամեաց, այլ նաև ի մերայնոց, զի մի ասպատակիցեն և խուիցեն ևն. ...։... այժմ գալով ես ի սիպին՝ զտի անդ զվ.եր. Տէր մինասն կերլացին, և ասաց թէ գնալոց է ի Լէհաստան յայսմիկ ամառան, վասն բարգրգին Տէր Ստեփան Վարդապետին Լէհաստանեայց, (զորմէ գրեալ էի Գերյարգելութեանդ) և ասաց թէ զիս տանելոց է ընդ ինքեան, և անտի գալոց եմք ի միասին ի Վէնէտիկ։ (Հ. Թէոդորոս Ցովանննիսեանն առ Մխիթար, յամին 1742 Ապրիլի 17, ի սիպին քաղաք)։

ձբ.

Ներ նախընթաց աւագ չափաթին զվէզիրն[1] փոխեցին և աքսորեցին, և եդին զայն վէզիրն[2], որ ի ժամանակի հուճէթէ հալածանացն վասն ուղղափառութեան՝ էր ի յիշխանութեան, ևս էր աղայն սառաւֆ սեղբոսին, և զսա կոչեաց, զի զայցէ փութանակի ի յերուսաղեմայ, և լինիցի պագիրկեան պաչի ինքեան, որպէս էր նախ։... այս վէզիրն զբազումս ըմբռնեաց և ասաց թէ ի ձեզ զբազումս ապրանս զոն ելեալ վէզիրն. և իրաւի այսու զանթուելի ապրանս գտաւ, և մինչև ցայժմ բազմաց զտանջանս տայ, զի զճշմարիտն ասիցեն։ Այնքան անթուելի զանձս հաւաքեալ է անիրաւաբար ելեալ վէզիրն, մինչ զի լսօղքն ոչ հաւատան, բայց է իրաւի, ուստի ըստ չափու անիրաւութեան գտաւ պատուհասն, զի ասեն թէ ի յակսորն ինքն զմիսն ինքեան կծեալ է, և այնու տանջի հանապազ։ (Հ. Պետրոս վ. առ Մխիթար, յամին 1742 ի մայիսի 29. [կ. Պոլիս?])։

ձգ.

Ցայժմ ի ըստամպօլ ի մեծի ուրախութեան է, զի հէքիմ օղլու խպրահիմ փաշան, որ վէզիր եղև, սկսաւ ապրուստն առատանալ, և թանկութիւն իրացն բառնալ, և զպատերազմն որ ընդ կարմի[ր] գլխոյն հետ մատերազմն լինելոց էր՝ զանց ըրին, ուստի և այսու թէ թագաւորն և թէ իշխանքն և թէ այլք ժողովուրդքն են միշտ ի յուրախութեան։ (Հ. Պետրոս վ. առ Մխիթար, յամին 1742 յուլիսի 23, [կ. Պոլիս?])։

ձդ.

Աստուածային նախախնամութիւնն յայտնապէս երևեցաւ ի վերայ քրիստոնէից որ 16000 հրէի տուն երվեցաւ, այսքան տաճկի տուն այսքան չարսու բազար որ կասեն էթէ տուն էթէ բանուոր օդայ 82000. եկաւ ֆռանկի հայի մահլին դէմ առաւ. աստուածային նախախնամութեամբն հօճն վեր ելաւ դարձուց դէպ յետ զինչ ասեմ բոլոր յոյսերնիս հատաւ, պատրաստեցաք որ մոնեմք նաւ, տէրն յինքն ազատեաց. 48 սահաթ երեցաւ։ (Անդրեաս առ Մխիթար, յամին 1742 Օգոստոսի 10. Իզմիր)։

---

1. Հէքիմզադէ Ալի փաշա։
2. Եսսէյտ Հասան փաշա։